**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մայիսի 2018 թ. N 348-Ն

ք. Ստեփանակերտ

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 712 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը *ո ր ո շ ու մ է.*

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 25-ի ««Արցախանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և կանոնադրությունը հաստատելու մասին» N 712 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 3-րդ կետի «բ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բ) «Արցախանտառ» ՊՈԱԿ-ն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

- բնափայտի մթերում, վերամշակում և իրացում,
- տնկանյութի (տնկիների, սերմնաբույսերի) աճեցում և իրացում,
- մեղվաբուծություն,
- խորհրդատվության և տեղեկատվության տրամադրում,
- հանգստի և զբոսաշրջության հետ կապված սպասարկման ծառայությունների մատուցում,
- անտառօգտագործման և անտառապահպանության հետ կապված վճարովի ծառայությունների մատուցում.».

2) որոշման 5-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությանը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարությանը» բառերով.

3) որոշմամբ հաստատված հավելվածի՝

ա. 2-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությանը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Սահմանադրությանը» բառերով,

բ. 7-րդ և 10-րդ կետերում, 11-րդ կետի «գ» ենթակետում, 18-րդ, 21-րդ և 23-րդ կետերում, 25-րդ կետի «ժ» ենթակետում, 28-րդ կետի «բ» և «ժբ» ենթակետերում, 36-րդ, 40-րդ և 45-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով,

գ. 9-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, քաղ. Ստեփանակերտ, Խանդի բաղ տեղամաս» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետություն, քաղաք Ստեփանակերտ, Թումանյան փողոց, 117» բառերով,

դ. 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12. Կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

ա) բնափայտի մթերում, վերամշակում և իրացում,

բ) տնկանյութի (տնկիների, սերմնաբույսերի) աճեցում և իրացում,

գ) մեղվաբուծություն,

դ) խորհրդատվության և տեղեկատվության տրամադրում,

ե) հանգստի և զբոսաշրջության հետ կապված սպասարկման ծառայությունների մատուցում,

զ) անտառօգտագործման և անտառապահպանության հետ կապված վճարովի ծառայությունների մատուցում:»,

ե. 13-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությունը (այսուհետ՝ վարչություն)» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն)» բառերով,

զ. 16-րդ և 21-րդ կետերում, 28-րդ կետի «բ» և «ժա» ենթակետերում, 30-րդ, 31-րդ և 40-րդ կետերում «վարչություն» բառը և դրա համապատասխան հոլովաձևերը փոխարինել «նախարարություն» բառով և դրա համապատասխան հոլովաձևերով,

է. 17-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության պետը (այսուհետ՝ վարչության պետ)» և «վարչության» բառերը փոխարինել համապատասխանաբար «Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարը (այսուհետ՝ նախարար)» և «նախարարության» բառերով,

ը. 18-րդ կետում «վարչության պետը» և «վարչության» բառերը փոխարինել համապատասխանաբար «նախարարը» և «նախարարության» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ